ԵՂՎԱՐԴԻ ՀԱՄԼԵՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Գրաճանաչության կազմակերպման առանձնահատկությունները

Մասնակից՝ Ակինյան Անահիտ Շավարշի

Դպրոց՝ Եղվարդի Համլետ Թադևոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց

Վերապատրաստող՝ Թամարա Սիմոնյան

Կոտայք 2022

Բովանդակություն

Ներածություն..... 3
1. Գրաճանաչության ուսուցման սկզբնական շրջանը..... 5
2. Գրության ուսուցման ու կրթադաստիարակչական աշխատանքները..... 11
3. Խոսքի ուսուցումը գրաճանաչության շրջանում և դրան ուղղված կրթադաստիարակչական աշխատանքները.....19
Եզրակացություն 23
Օգտագործված գրականության ցանկ 25

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Յուրաքանչյուր ժողովրդի մշակույթի ու դպրոցի պատմությունն սկիզբ է առնում ազգային գրերի ստեղծումից և դրանց ուսուցումից: Այս առումով մանկավարժական գիտություններից ամենից հինը մայրենի լեզվի մեթոդիկան է, իսկ նրանում էլ ամենահինը՝ գրաճանաչության բաժինը: Սակայն չնայած այդ պատկառելի հնությանը, զարմանալիորեն մինչև վերջերս մենք գրաճանաչության մեթոդիկայի ամբողջական ձեռնարկ չունեինք, ուր որոշակի համակարգով շարադրված լինեին այդ բնագավառում դարերի ընթացքում դպրոցի ձեռք բերած դրական փորձն ու ժամանակակից մանկավարժական գիտության նվաճումները:

Ճիշտ է, գրաճանաչության ուսուցման մասին խոսվել է Խ. Աբովյանի, Ա. Բահաթրյանի, Թ. Խզմալյանի, Գ. Էդիլյանի և Ա. Ղարիբյանի մեթոդական ձեռնարկներում, սակայն. գրաճանաչության ուսուցման հարցը ամբողջության մեջ վերցված առաջին անգամ քննարկվել է Լ. Խուդոյանի «Գրաճանաչության ուսուցման մեթոդիկա» (1935 թ.) և Ա. Տեր-Գրիգորյանի «Գրաճանաչության մեթոդիկա» (1968 թ.) գրքերում, որոնցից միայն երկրորդն է գործածության մեջ՝ չնայած անցած ժամանակաշրջանում նրանում ևս զգալի փոփոխություններ են կատարվել:

Գրաճանաչության մեթոդիկան զբաղվում է գրաճանաչության ուսուցման հարցերով՝ գրուսուցման ժամանակակից մեթոդի, 6—7 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկությունների, այբբենարանի կառուցվածքի ու բովանդակության, ուսումնական աշխատանքի գիտական կազմակերպման, երեխաների համակողմանի դաստիարակության խնդիրների ընդգրկումով:

Այս առումով էլ գրաճանաչության մեթոդիկան հենվում է ժամանակակից մանկավարժության ու դիդակտիկայի, մանկավարժական հոգեբանության ու մարդաբանության, մայրենի լեզվի մեթոդիկայի և հայոց լեզվի գիտական հնչյունաբանության վրա, որոնք նրա տեսական հիմունքներն են կազմում՝ յուրաքանչյուրը յուրովի նպաստելով գրաճանաչության ուսուցման գիտական սկզբունքների մշակմանը:

Թեմայի նպատակը և խնդիրները: Ուսումնասիրության նպատակն է ներկայացնել գրաճանաչության կազմակերպման առանձնահատկությունները:

Ըստ այդ հետազոտության են ենթարկվել հետևյալ խնդիրները.

1. Վերլուծել գրաճանաչության ուսուցման սկզբնական շրջանը
2. Ներկայացնել Գրության ուսուցման ու կրթադաստիարակչական աշխատանքները
3. Բացահայտել Խոսքի ուսուցումը գրաճանաչության շրջանում և դրան ուղղված կրթադաստիարակչական աշխատանքները

1. Գրաճանաչության ուսուցման սկզբնական շրջանը

Գրաճանաչության ուսուցման նախապատրաստական շրջանի հիմնական նպատակը երեխաներին միասնական դասարանական կոլեկտիվի մեջ կազմակերպելը և կարդալ ու գրել սովորելու աշխատանքի համար նրանց տեսականորեն ու գործնականորեն, հոգեբանորեն ու ֆիզիկապես նախապատրաստելն է: Այս շրջանի տևողությունը միշտ էլ տատանվել է. մինչև վերջերս՝ հնչյունային մեթոդի գործադրման ժամանակ, այն տևում էր 2—3 շաբաթ, հնչույթավանկային մեթոդի զործադրումով այդ ժամանակը կրճատվեց հասցվեց 1 — 1,5 շաբաթի, հնչույթաբառային մեթոդի գործադրման պայմաններում այն տևում է 3 — 4 շաբաթ և այլն: Տևողության այս տարբեր ժամկետների առկայությունը պայմանավորված է քաղաքային և գյուղական դպրոցների, մանկապարտեզներից ու ընտանիքներից դպրոց եկած երեխաների դպրոցի համար պատրաստված լինելու աստիճանի, բարբառային միջավայրի և երեխաների տարիքային տարբերություններով, որոնք որոշակիորեն ազդում են գրաճանաչության ուսուցման ճիշտ կազմակերպման ու դրա արդյունավետության վրա: Ընդ որում, նախապատ-րաստական շրջանի տևողությունը երբեմն կարող է որոշել դպրոցը՝ ելնելով տեղական պայմաններից և այդ ժամանակն ավելի նպատակահարմար օգտագործելու հնարավորություններից[1]:

Նախապատրաստական շրջանը ոչ միայն անհրաժեշտ, այլև խիստ կարևոր է բոլոր դպրոցների ու բոլոր առաջին դասարանների համար, որովհետև հետագա աշխատանքի ամբողջ հաջողությունը մեծ չափով կախված է նաև աշակերտների դպրոցի համար լավ նախապատրաստված լինելուց, այն ինչ երեխաների մեծ մասն առայժմ դպրոց է գալիս չնախապատրաստված, ուստի այդ նախապատրաստությունը պետք է ստանա դպրոցում: Այդ նախապատրաստությունը պետք է կատարվի ժամանակակից մանկավարժական գիտությունների պահանջներին համապատասխան, որոշակի ծրագրով ու մեթոդներով, որպեսզի անհրաժեշտ արդյունք տա, նպաստի երեխայի մտավոր

[1] Ա.Տեր-Գրիգորյան, Գրականության մեթոդիկա, Երևան, 1968, էջ 41:

զարգացմանը, գրաճանաչության ուսուցման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը:

Այս շրջանի համար բնորոշ են հետևյալ հիմնական խնդիրները՝ աշակերտների ծանոթացումը դպրոցական կարգուկանոնին, երեխաների խոսքի զարգացումը, տեսողության, լսողության, կինեսթետիկ զգացողության և ուշադրության մշակումը, գրելու համար ձեռքի նախապատրաստումը, կարդալու սկզբնական կարողության ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, աշխարհաճանաչողական տարրական տեղեկությունների հաղորդումը, աշակերտների ուսումնասիրումը, դասարանական միասնական կոլեկտիվի ստեղծումը և այլն: Այս աշխատանքներից ամեն մեկը յուրովի վերցրած տարբեր տիպի պարապմունքների մի ամբողջ համակարգ է կազմում, սակայն առանձին ու անկախ հանդես չի գալիս. հնարավոր չէ ասել, թե երբ է ավարտվում մեկը և երբ է սկսվում մյուսը, որովհետև դրանք խորապես միմյանց մեջ ներթափանցված, փոխադարձորեն միմյանց լրացնող ու ամբողջացնող աշխատանքներ են:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության ապահովման համար կարևոր նշանակություն ունի դասարանի ճիշտ կոմպլեկտավորումը: Մինչև դպրոցում պարապմունքների սկսվելը առաջին դասարան ընդունվող երեխաների նախնական ուսումնասիրումը ինչպես դասարանը ճիշտ կոմպլեկտավորելու, այնպես էլ երեխաների հետ ծանոթանալու և արդյունավետ աշխատանք կազմակերպելու տեսակետից գործնական արժեք ունի:

Երեխաների այս նախնական ուսումնասիրությունը կարող է անցկացնել դպրոցի տնօրինության կողմից ստեղծված հանձնաժողովը, որի կազմում պետք է մտնեն առաջին դասարանում պարապող ուսուցիչները, տարրական բաժնի ուսմասվարը, դպրոցի բժիշկը և այլն: Աշակերտների գիտելիքների ծավալի ու դպրոց ընդունվելու համար նրանց նախապատրաստված լինելու մակարդակի մասին որոշակի գաղափար կազմելը հնարավորություն կտա ոչ միայն դասարանները ճիշտ կոմպլեկտավորել, այլև երեխաների հետ տարվող հետագա աշխատանքները նպատակային ու արդյունավետ դարձնել:

Դպրոցը երեխայի համար նոր աշխարհ է՝ նոր հետաքրքրություններով, հոգսերով ու տպավորություններով, ուրախություններով ու դառնություններով լի:

Ուսուցիչն իր աշխատանքն այնպես պետք է կազմակերպի, որ առաջին օրերին երեխաների համար այդ ամենի մեջ հաճելին ավելի շատ լինի, քան տհաճը, ոգևորությունն ավելի մեծ բաժին ունենա, քան հուսախաբությունը[2]: Սա շատ կարևոր նշանակություն ունի ոչ միայն այս առաջին օրերի ուսուցողական դժվարին խնդիրների լուծման համար, այլև դաստիարակչական տեսակետից: Սակայն այդ չի նշանակում ամենևին, թե դասերը պետք է վերածել հաճելի ժամանցի. սովորելու աշխատանքի պատասխանատվությունը և դժվարությունը երեխաներն անպայման պետք է զգան, սակայն դրա հետ միաժամանակ պետք է նաև զգան, որ այդ աշխատանքն իրենց ուժերին ու կարողություններին հասանելի է, որ ուսուցիչը դժվարին պահերին միշտ իրենց հետ է, և չկա որևէ դժվարություն, որ նրանք, աշխատելու դեպքում, չկարողանան հաղթահարել:

Աշակերտի առաջին օրերը դպրոցում պետք է հագեցված, բովանդակալից, աշխույժ, թեթև ու հաճելի լինեն, իսկ դրա համար ուսուցիչը պետք է բազմակողմանիորեն նախապատրաստված լինի, հաշվի առնի ուսումնական ժամանակի յուրաքանչյուր վայրկյանը, դասը տանի մի քանի պլանով՝ նկատի ունենալով թե՛ դաստիարակչական ու կրթական աշխատանքների և թե՛ խաղի ու աշխատանքի նպատակահարմար զուգակցումը, գրաճանաչության ուսուցման համար երեխաներին մտավոր ու ֆիզիկական տեսակետից հնարավորին չափ լավ նախապատրաստելը: Դրա համար անհրաժեշտ կլինի որոշակի աշխատանք տանել հետևյալ ուղղություններով:

Ծանոթացումը դպրոցական կարգուկանոնին անհրաժեշտ պայման է բոլորովին նոր ու անծանոթ միջավայրում երեխաների արդյունավետ աշխատանքի համար: Այս առումով ուսուցիչը պետք է նկատի ունենա հետևյալ հիմնական հարցերը, որոնք կարևոր նշանակություն ունեն աշակերտներին դպրոցին ծանոթացնելու համար[3].

1) Աշակերտների տեղաբաշխում՝ ըստ նրանց առողջական տվյալների ու դպրոցական առողջապահության պահանջների:

---

[2] Ա. Տեր-Գրիգորյան. Հայոց լեզվի մեթոդիկա. Երևան, 1980, էջ 32:
[3] Ա. Բահաթրյան. Մայրենի լեզվի ուսուցումը տարրական դպրոցների մեջ. Երևան, 1987, էջ 13-15:

2) Աշակերտների փոխադարձ ծանոթացումը, որը դասարանական համերաշխ կոլեկտիվի ստեղծման հիմքն է:

3) Դպրոցական կարգուկանոնի բացատրումը, որը պետք է ուղեկցվի համապատասխան ձևերի ցուցադրումով, որպեսզի երեխաների մեջ վարվեցողության այս կամ այն կանոնը դառնա կարողություն:

4) Ճիշտ նստել սովորեցնելը, որը ոչ միայն առողջապահական կանոնների պահպանման, այլև երեխաների ֆիզիկական նորմալ զարգացման և դասերին ակտիվ կերպով մասնակցելու հիմնական նախապայմաններից մեկն է:

Դպրոցական կարգուկանոնի ուսուցումը և համապատասխան կարողությունների ձևավորումը որոշակի կերպով անդրադառնում է երեխաների կամքի ու բնավորության ձևավորման վրա: Խոսքի զարգացումը ևս կարևոր նշանակություն ունի գրաճանաչության ուսուցմանը աշակերտներին նախապատրաստելու գործում, և այդ աշխատանքը պետք է ուշադրության կենտրոնում լինի:

Առաջին դասարանի աշակերտի խոսքի զարգացման համար անհրաժեշտ երեք բաղադրիչների՝ բառապաշարի. հարստացման ու կատարելագործման, խոսքի արտահայտչականության՝ առոգանության և տրոհության պահպանման և լավ պատմելու կարողության մշակման աշխատանքները պետք է իրականացնել միաժամանակ, միմյանց հետ սերտորեն կապված: Իսկ դրա լավագույն միջոցը կապակցված խոսքն է՝ երեխաներին խոսեցնելը, տեսածի, լսածի ու զգացածի մասին պատմելը: Խոսելու, արտահայտվելու կամ պատմելու ընթացքում որոշակիորեն դրսևորվում է երեխայի բառապաշարը, խոսքի արտահայտչականությունն ու պատմելու կարողությունը, և այն, ինչ թերի է, ուսուցիչն ուղղում, շտկում ու կատարելագործում է կոնկրետ լեզվական նյութի վրա:

Գրաճանաչության ուսուցման համար աշակերտները նաև որոշակի լեզվական ու աշխարհաճանաչողական գիտելիքներ պետք է ունենան, տեսականորեն ու գործնականորեն պետք է նախապատրաստվեն կարդալու և գրելու մտավոր գործողությունների կատարմանը, որոշակի կարողություններ պետք է ձեռք բերեն այդ ուղղությամբ:

Լեզվական նախագիտելիքների ուսացումը, անհրաժեշտություն է և դրա վրա հատուկ ուշադրություն պետք է դարձնել: Գրաճանաչության ուսուցման ընթացքում գրեթե ամեն օր ու ամեն դասի խոսք է լինում նախադասության, բառի, վանկի, միավանկ ու բազմավանկ բառերի, հնչյունի, ձայնավոր ու բաղաձայն հնչյունների, տառի, մեծատառի ու փոքրատառի, տպագիր ու ձեռագիր տառերի և այլ լեզվական հասկացությունների մասին, որոնք, անկասկած, երեխաների համար պետք է հասկանալի լինեն: Լեզվական այդ հասկացությունների մասին երեխաները գաղափար պետք է կազմեն նախապատրաստական շրջանում:

«Այբբենարան»-ում տրված թեմատիկ, առարկայական և բառ- նկարների օգնությամբ երեխաներին գաղափար ենք տալիս խոսքի կամ ամբողջական պատմության», նախադասության ու բառերի մասին, այդ լեզվական անվանումները կապելով կոնկրետ հասկացությունների յուրացման հետ, որպեսզի դրանցից յուրաքանչյուրը որոշակի բովանդակություն ու իմաստ ստանա և հեշտությամբ մտապահվի: Առանձնապես օգտակար են նախադասությունները բառերի բաժանելու, առաջադրված բառերով նախադասություններ կազմելու, ինքնուրույն կերպով նախադասություններ ու բառեր ասելու վարժությունները[4]:

Բառի մասին հասկացություն տալուց հետո ՝ գաղափար պետք է տալ նաև վանկի՝ բառի արտասանական միավորների կամ մասերի վերաբերյալ: Այս կապակցությամբ էլ երեխաները կծանոթանան միավանկ և բազմավանկ բառ հասկացություններին:

Վանկից անցում է կատարվում հնչյունին, որպեսզի հետագայում բոլոր վերլուծությունները մինչև լեզվական տարրական մասնիկների տարբերակումը հասցնելու հնարավորություն ստեղծվի, և հող նախապատրաստվի գրաճանաչության ուսուցման համար: Սկզբում գաղափար է տրվում վանկի, ապա նաև բառի մեջ եղած հնչյունների մասին, իսկ ավելի ուշ երեխաներին պետք է սովորեցնել տարբերակել հնչյուններն ըստ արտասանության երկարության կամ ժամանակի, ըստ ձայնի և աղմուկի հարաբերության: Ըստ որում, երեխաները պետք է կարողանան տարբերել երկար արտասանվող և շատ ձայն ունեցող ձայնավոր և

[4] Ա. Տեր-Գրիգորյան, Աշխատանք այբբենարանով, Երևան, 1979, էջ 19:

կարճ արտասանվող ու քիչ ձայն ունեցող բաղաձայն հնչյունները, դրանք արտահայտել գծային մոդելների վրա՝ սկզբում միայն հնչյունների քանակը, իսկ ապա նաև տեսակը նշելով: Ամբողջ վերլուծության շղթան նախադասությունից մինչև հնչյուն տանող հաջորդականաթյամբ այսպիսի պատկեր կունենա գծային մոդելով արտահայտելիս:

Գրելու ուսուցմանը երեխաներին նախապատրաստելը ևս կարևոր նշանակություն ունի գրաճանաչության ուսուցման համար: Գրաճանաչություն ասելով հասկանում ենք ոչ միայն հնչյունների գիտակցումն ու դրանց համապատասխան տառերի ճանաչումը, այլև սովորած տառերը գրելը, այսինքն՝ լսած հնչյունն իր համապատասխան տառով նշանագրելը, տառերը համադրելով բառեր ու նախադասություններ ստանալը:

Գրելու աշխատանքին վարժեցնելու համար ամենից առաջ պետք է զարգացնել աջ ձեռքի դաստակի ու մատների մանր-մկանային համակարգը: Առանց դրա երեխան ի վիճակի չի լինի գրելու համար անհրաժեշտ նուրբ ու չափավորված շարժումներ կատարելու, ձեռքի մկանները չեն կարողանա զգայական գրգիռների միջոցով ուղեղի հաղորդած տեսողական պատկերները նույնությամբ վերարտադրել՝ պահպանելով առաջադրված պատկերների նմանությունը, համաչափությունը, թեքությունն ու գեղեցկությունը: Գրելու աշխատանքին նախապատրաստվելը, ընդհանրապես լսողական, լեզվաշարժողական, տեսողական և մկանահոդային կինեսթետիկ ասոցիացիաների մշակման աշխատանքի նախապատրաստում է, որպիսին, ըստ էության, մարդկային խոսքն է՝ թե՛ բանավորը և թե՛ գրավորը:

Կարդալու նախապատրաստումը ևս կարևոր աշխատանքներից մեկն է և այս շրջանին առանձնահատուկ: Մինչև վերջերս կարդալու ալգորիթմի ձևավորմանն անդրադառնում էին միայն այբբենական շրջանում, երբ առաջին խումբ տառերի ուսուցումից հետո հնարավոր էր լինում դրանցից բառեր կազմել ու կարդալ: Սակայն այժմ կարդալու մտավոր գործողությանը երեխաներին պետք է վարժեցնել դեռևս նախապատրաստական շրջանում՝ հիմք ունենալով բառերի գծային մոդելներն ու վանկային կորերը:

2. Գրության ուսուցման ու կրթադաստիարակչական աշխատանքները

Գրաճանաչության ուսուցման աշխատանքներում ինչպես իր տևողությամբ ու բարդությամբ, այնպես էլ կարևորությամբ ամենահիմնական տեղը գրավում է բուն գրուսուցման կամ այբբենական շրջանը:

Այբբենական շրջանում երեխան ճանաչում է բոլոր հնչյուններն ու դրանց տառերը, սովորում է դրանք ճիշտ արտաբերել, գրել ու կարդալ կամ՝ հնչյունները վերածել գրերի՝ գրել, գրերը վերածել հնչյունների՝ կարդալ՝ ինչպես առանձին ու անկախ վերցրած, այնպես էլ մյուս հնչյունների ու տառերի հետ ունեցած կապակցության մեջ:

Այս բարդ ու բազմակողմանի աշխատանքն ամբողջ այբբենական շրջանում նույնը չի մնում, ուսուցման տարբեր փուլերում նրա խնդիրներն ու նպատակները և դրանցով պայմանավորված նաև աշխատանքի կազմակերպման մեթոդական ձևերն ու եղանակները հետզհետե փոխվում են: Երբ երեխաները նոր են սկսում սովորել հնչյուններն ու դրանց տառերը, հիմնականում հնչյունների ու տառերի ուսուցում է կատարվում, իսկ հետագայում դրան միանում է նաև բառեր կարդալու ուսուցումը, ավելի ուշ՝ բառակապակցությունների, նախադասությունների ու կապակցված բնագրերի ընթերցումը, ուղղագրական ու ուղղախոսական պարզ կանոնների յուրացումը, լեզվական ու աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդումը, դաստիարակչական համակողմանի աշխատանքը և այլն: Այս ամենը, բնականաբար, բարդացնում ու բազմակողմանի են դարձնում գրաճանաչության ուսուցման աշխատանքը: Ըստ աշխատանքի կազմակերպման այդ առանձնահատկությունների և ուսուցման խնդիրների գրաճանաչության այբբենական շրջանը բաժանվում է երեք փուլերի:

Առաջին փուլում ուսուցանվում են գրության ու արտասանության տեսակետից ամենահեշտ ու ամենագործածական հնչյուններն ու դրանց տառերը (ա, ի, ու, տ, կ, ս, ր, ն, մ, շ, լ, պ): Այս փուլում երեխաներն էլ ավելի են վարժվում բառերի վանկային ու հնչյունային վերլուծություններ ու համադրություններ կատարելու մեջ, սովորում են

բառեր կարդալ՝ կարդալու հիմքում ունենալով վանկերով կամ բառերով կարդալու սկզբունքը՝ նայած ինչ մեթոդով է կատարվում ուսուցումը[5]:

Առաջին փուլում երեխաներին սովորեցնում ենք նաև գրել անցած տառերն ու այդ տառերը պարունակող բառեր ու բառակապակցություններ:

Երկրորդ փուլում անցնում ենք համեմատաբար ավելի դժվար արտասանություն ու գրություն ունեցող ու ավելի քիչ գործածական հնչյուններն ու տառերը (ը, է, (ե), օ, (ո), վ, հ, յ, զ, ռ, ղ, ժ, խ, բ, գ, դ): Հետագայում հնչյուն-տառերի այս շարքում որոշ փոփոխություններ կատարվեցին՝ նման հնչյունները միասին անցնելու կապակցությամբ ղ-ն մոտեցավ խ-ին և կազմեց մեկ զույգ, փ-ն մոտեցավ բ-ին, գ-ն՝ ք-ին և դ-ն՝ թ-ին՝ համապատասխան զույգեր ստեղծելով:

Ընթերցման համար առաջադրվող նյութերը անհամեմատ ավելի բարդացվում են. տրվում են 4—5 նախադասություններից բաղկացած բնագրեր: Բարդանում է նաև գրելու աշխատանքը. գրում են նոր տառը պարունակող բառեր, բառակապակցություններ ու նախադասություններ՝ ինչպես արտագրությամբ, այնպես էլ թելադրությամբ, սովորում են մեծատառի գործածությունը նախադասության սկզբում և վերջակետից հետո, որոնց մասին ամեն անգամ գրելիս ուսուցիչը պետք է հիշեցնի: Այս փուլում տրվում են նաև տպագիր նյութը ձեռագիր վերածելու առաջադրանքներ, որոնք երեխաները կարողանում են հաղթահարել:

Գրելու աշխատանքներին զուգընթաց սովորում են նաև վայելչագրական և ուղղագրական մի շարք կանոններ՝ բառերը գրել միմյանցից ու տառի չափ հեռավորությամբ, նոր գրելիս սկսել մի քիչ խորքից. մարդկանց անուններն սկսել մեծատառով և այլն: Թելադրությամբ բառեր ու բառակապակցություններ գրել տալու համար նախապես դրանք վերլուծության պետք է ենթարկել, որպեսզի երեխաները չդժվարանան, որպեսզի գրելիքի կայուն մտապատկեր ստեղծվի:

Երրորդ փուլում անցնում ենք արտասանության ու գրության տեսակետից բարդ և խոսքի մեջ համեմատաբար ավելի քիչ գործածական հնչյուններն ու տառերը՝ հետագայում կատարված մասնակի փոփոխություններով հանդերձ (ե, ո, և, թ, չ, ծ, ց, փ, ջ, ք, ճ, ֆ, ձ): Այս փուլի ամենամեծ դժվարությունը, անշուշտ, երկհնչյուն և

[5] Ա.Տեր-Գրիգորյան,Ա.Սիմոնյան, Ընթերցանության դասը տարրական դասարաններում, Երևան 1974, էջ 67:

եռահնչյուն (ե, ո, և) տառերի երևան գալն է, որը միանգամայն նորություն է երեխաների համար, և նրանք պետք է կարողանան հիմնավորապես յուրացնել մեր այբուբենի նաև այդ առանձնահատկությանը:

Կարդալու համար առաջադրվում են տարբեր վանկային կառուց- վածք ունեցող բառեր՝ հաճախ նաև բաղաձայնական կուտակումներով (սունկ, տունկ, տաշտ, դաշտ, սանր), կապակցված ամբողջական նյութեր՝ 4—5 բառից կազմված նախադասություններով, շաղկապներով և անշաղկապ բարդ նախադասություններ և այլն[6]:

Գրաճանաչության շրջանում երեխաների առջև ծառացած ամենահիմնական խնդիրը բառի հնչյունային վերլուծությունը և յուրաքանչյուր հնչյուն իր համապատասխան տառի հետ կապելն է, աչքի առջև տառեր ունենալով դրանց հնչյունները հիշելն ու արտաբերելը, վանկի ու բառի մեջ դրանք միավորելն ու արտաբերելը՝ որպես արտասանական միաձույլ ամբողջություն: Քանի դեռ անցած հնչյունը և տառը բավականաչափ չեն ամրապնդվել երեխաների գիտակցության մեջ, կայուն կապեր չեն ստեղծվել հնչյունի, նրա տառերի գրաֆիկական պատկերների, դրանց գրության ու արտասանության համար անհրաժեշտ կինեսթետիկ շարժումների միջև, հնչյունը և տառը յուրացված համարել չի կարելի, ուրեմն և նոր հնչյուն դեռևս չպետք է անցնել: Հնչյունի ու նրա տառերի լրիվ յուրացման համար կարևոր նշանակություն ունի դրանց հաճախակի կրկնությունը հետագա նյութերում, որպեսզի արդեն ուսուցված հնչյունի ու նրա տառերի յուրացումը կայունանա, ամուր զուգորդումներ ստեղծվեն, որպեսզի դրանք նոր կապակցությունների մեջ մտնեն ուսուցվող և արդեն ուսուցված հնչյունների ու դրանց տառերի հետ:

Բառի մեջ առանձին հնչյունը երեխաների համար լսելի դարձնելու նպատակով որոշակի աշխատանք պետք է տանել ինչպես նախապատրաստական, այնպես էլ գրաճանաչության շրջանում: Եթե նախապատրաստական շրջանում երեխաները վարժվում են առանձին հնչյունները լսելու և դրանք միմյանցից տարբերելու մեջ, ապա գրաճանաչության շրջանում յուրաքանչյուր առանձին հնչյուն, որը նոր ու

[6] Ջ.Գյուլամիրյան, Կարդալու տարրական կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան 1998, էջ 11:

անծանոթ է նրանց համար, սովորում են անջատել ծանոթ ու անծանոթ հնչյունների հնչյունախմբից:

Հնչյունի ուսումնասիրման, ճանաչման ու գիտակցման համար ելակետային նշանակություն ունի հնչյունի անջատումը կենդանի խոսքից կամ բառից, որտեղ հնչյունը հանդես է գալիս բնական վիճակում՝ մյուս հնչյունների հետ ունեցած սերտ կապակցության մեջ, որն սկզբնական շրջանում շատ է դժվարացնում նրա, որպես լեզվական առանձին միավորի, գիտակցումը: Գրաճանաչության ուսուցման ամենադժվարին և միաժամանակ ամենակարևոր ու պատասխանատու աշխատանքը նոր սովորելիք հնչյունի անջատումն է բառից, որը կարող է իրականացվել մի շարք ձևերով՝ նայած հնչյունի բնույթին և աշակերտների ըմբռնման մակարդակին:

Ուսուցվելիք հնչյունի առանձնացումը բառից. Անծանոթ հնչյունի անջատման ամենատարածված ձևը բառի տարրալուծումն է վանկերի ու հնչյունների: Բառը աշակերտների միջոցով վանկերի բաժանելուց և վանկ առ վանկ մի քանի անգամ արտասանել տալուց հետո հետագա վերլուծության համար վերցվում է այն վանկը, որի մեջ գտնվում է անծանոթ հնչյունը: Կարելի է վերլուծությունն սկսել նաև այն վանկից, որի մեջ բոլոր հնչյունները երեխաներին ծանոթ են, և ապա նոր անցնել մյուս վանկին, որի մեջ գտնվում է նոր հնչյունը: Աստիճանաբար անջատել ենք տալիս այն հնչյունները, որոնք արդեն ծանոթ են աշակերտներին, որով դրանք վերստին վերհիշվում ու ամրապնդվում են, մինչև որ մնամ է միայն անծանոթ հնչյունը. դրանով անծանոթ հնչյունն անջատվում է բառից:

Ձայնավոր հնչյունները ձայնով կամ արտասանությամբ ընդգծելը շատ հեշտ է, որովհետև ցանկացած չափով կարելի է երկարաձգել կամ տևական դարձնել դրանց արտասանությունը: Սակայն բաղաձայն հնչյուններն այս ձևով հնարավոր չէ անջատել, որովհետև արտասանության այս կամ այն աստիճանում մաքուր հնչյունը խլանում է, և նրա տեղը բռնում է ը հնչյունը:

Տառը ցուցադրելիս ուսուցիչն աշակերտների ուշադրությունը հրավիրում է նրա վրա և բացատրում, թե տառն ինչպես է ստացվում, ինչ գծերի համադրության արդյունք է:

Երեխաների մեջ հնչյունի ու նրա տառերի միջև ամուր կապեր ստեղծելու նպատակով ուսուցված հնչյունի ու նրա տառերի ամրապնդման դասերին կարելի է անցկացնել մի շարք բնորոշ վարժություններ ա) ասել հնչյունը և պահանջել, որ երեխաները ցույց տան տառարանից հանած համապատասխան տառը. բ) ասել բառեր, պահանջել, որ ցույց տան բառի առաջին հնչյունին համապատասխանող տառը և այլն:

Հնչյունային և տառային համադրություններ. Կենդանի խոսքում բառի մեջ եղած հնչյունները հանդես են գալիս միաձույլ ձևով, և հենց այդ միաձուլումն էլ ստեղծում է բառը: Այսպիսի միաձուլում ստեղծելու կարողություն երեխաների մեջ պետք է մշակել գրաճանաչության շրջանում, քանի որ առանց հնչյունների համադրումից վանկեր ու բառեր ստանալու կարդալու ուսուցումը հնարավոր չէ:

Հնչյունային ու տառային համադրությունների կատարմանը մեծապես նպաստում է ծանոթ ու վերլուծված բառերի ընթերցումը, երբ բառի մեջ ամեն ինչ երեխային ծանոթ է, և նա հեշտությամբ տառային ու հնչյունային համադրություններ է կատարում, վանկեր ու բառեր է ստանում՝ դրանք արտաբերելով միաձույլ, բնական ձևով: Այս տեսակետից օգտակար պետք է համարել նաև նման բառերի ընթերցումը, երբ երեխաներին առաջադրում ենք հնչյունային ու վանկային կառուցվածքով նման կամ շատ քիչ տարբերվող բառեր (սար-սուր, աշուն-անուշ), որոնց ընթերցումը դժվարության հետ չի կապված, և աշակերտները կարող են դրանք միաձույլ վանկերով ու ամբողջական բառերով կարդալ: Այս վարժության մի տարատեսակն էլ բառերի հնչյունային կազմի անումը կամ նվազումն է, երբ ընթերցված ու ծանոթ բառի վրա մի նոր տառ է ավելացվում կամ պակասեցվում, և երեխաները պետք է կարողանան ըստ այդմ փոխել արդեն ընթերցած ու ծանոթ բառի կարդալու եղանակը և այն արտաբերել միաձույլ ձևով (ուր-սուր, ամիս-միս): Սրանք միջոց են երեխաների մեջ հնչյունային ու տառային համադրություններ կատարելու կարողության ձևավորման համար, և դրանք ուսուցիչն անուշադրության չպետք է մատնի:

Կարդալու սկզբնական կարողություն երեխաների մեջ սկսում է ձևավորվել դեռևս նախապատրաստական շրջանում, երբ նկարների ու գծային մոդելների

օգնությամբ նրանք միավանկ ու բազմավանկ բառերը վանկերով ու ամբողջական բառերով կարդալու վարժություններ են կատարում:

Կարդալու կարողության ձևավորումը տեղի է ունենում երեք փուլերով՝ վերլուծում, համադրում և ավտոմատացում:

Վերլուծական շրջանում կարդալու կարողության ձևավորումը տեղի է ունենում երկու ձեով՝ տառերի ճանաչումով և վանկերի ու բառերի մեջ դրանց հնչյունների միավորումով: Երեխայի մեջ տեղի ունեցող հոգեբանական այս երկու գործողություններն ըստ ժամանակի չեն համընկնում միմյանց հետ և առանձնահատկություններով էլ տարբերվում են միմյանցից: Այս առումով վերլուծական շրջանն իր հերթին բաժանվում է երկու աստիճանի՝ ա) տառերի ճանաչում և դրանց համապատասխան հնչյունների հետ կապակցում կամ սովորած հնչյուն-տառերի զուգորդում և բ) վանկային վերլուծություն ու ընթերցում:

Կարդալու ուսուցումը գործող երկու այբբենարաններով սկսվում է վանկից կամ ամբողջական բառից՝ նայած ուսուցումը որ մեթոդով է տարվում և ինչը պետք է կարդալու սկզբնական միավոր դառնա:

Գրաճանաչության ուսուցումը գիտական հիմքով տանելու համար այն պետք է խարսխի լեզվական միավորների՝ հնչույթի, բառի ու նախադասության վրա: Սակայն վանկի զգացողությունն անհրաժեշտություն է ոչ միայն խոսելու կամ խոսքի բնական դրսևորման, այլև կարդալու համար: Միջվանկային ոչ տևական փոքրիկ դադարները կամ բնական անջատումներն ու թուլացումներն անհրաժեշտ են ոչ միայն խոսելու, այլև կարդալու, գուցե առավել ևս կարդալու համար: Հետևաբար՝ վանկը որքան խոսելու, նույնքան էլ կարդալու համար է անհրաժեշտ, քանի որ կարդալը, ըստ էության, գրաֆիկական կամ հնչյուն խոսքի հնչյունավորումը, կենդանացնում է, իսկ կենդանի խոսքն առանց վանկային թուլացումների և ուժեղացումների գոյություն չունի: Վանկը կարդալու ուսուցման և բուն կարդալու գործողության համար նույնքան բնական անհրաժեշտություն է, որքան և կենդանի խոսքի կամ խոսելու գործողության համար:

Բառը հեշտ կարդալ սովորեցնելու գործում կարևոր նշանակություն ունեն հատվող այբուբենով կատարվող վարժությունները, երբ երեխաները վանկային ու հնչյունային վերլուծության են ենթարկում բառը, տառային համադրություններ են

կատարում և վանկերով ու ամբողջովին կարդում վանկ առ վանկ հավաքած բառը: Օգտակար պետք է համարել նաև նմանությամբ կարդալը, որը հատկապես մեծ կիրառություն ունի բառաշարքերն ընթերցելիս: Այստեղ ընթերցվող նյութի թե՛ քանակական և թե՛ որակական բարդացում է կատարվում, որովհետև բառաշարքերը կազմվում են յուրաքանչյուր շարքում վանկային կառուցվածքով ու հնչյունային կազմով նման բառերի ընդգրկման սկզբունքով, որպեսզի առաջին բառի ընթերցումը հիմք ստեղծի երկրորդի ընթերցման համար: Այս բառաշարքերից յուրաքանչյուրում ընդգրկված առանձին խումբ բառերի միջև լինում են և՛ նմանություններ, և՛ տարբերություններ, առաջինը՝ ընթերցումը հեշտացնելու, իսկ երկրորդը՝ բառն արտաբերելուց առաջ այն անպայման մտովի կարդալու համար: Այս ինքնաստուգումը խիստ կարևոր է, որպեսզի երեխան առանց կարդալու, միայն կռահումով չարտասանի բառը:

Բառակապակցության ընթերցումը ևս իր առանձնանահատկությունն ունի, և դա ուսուցման ժամանակ պետք է հաշվի առնել: Բառերի կապակցման, միմյանց վերագրելու ամենափոքր միավորը բառակապակցությունն է, որն ինչպես առանձին վերցրած, այնպես էլ նախադասության մեջ գիտակցվում է որպես ինքնուրույն, կայուն կամ ժամանակավոր կապակցություն[7]: Այդ կապակցված լինելը կամ հատկանիշը առարկային վերագրելը պետք է արտահայտվի նաև կարդալու եղանակով կամ բառերի արտաբերման հնչերանգով, սրպեսզի կարմիր վարդ, սարի շուշան բառակապակցություններից յուրաքանչյուրն արտաբերվի որպես իմաստով կապված միավոր, դրանցում եղած բառերը չհնչեն որպես առանձին ու անկախ միավորներ: Այստեղ բառակապակցության մեջ մտնող բառերի կապը զուտ տրամաբանական է, քերականական արտահայտություն չունի, սակայն ընթերցման ժամանակ ձայնի բարձրացումով ու ցածրացումով այն կապն այնպես ցայտուն պետք է արտահայտվի, որպեսզի լսողն այդ երկու բառն ընկալի որպես միմյանց հետ կապված մի ամբողջություն:

Նախադասության ընթերցումը ևս իր առանձնահատկությունն ունի, և այն որոշակի դժվարություն է ներկայացնում երեխաների համար: Նախադասության մեջ

[7] Հայ մանկավարժներ. Գիրք Բ. Երևան, 1961, էջ 25-27:

մտնող բառերի միջև եղած փոխադարձ կապվածությունը երեխաներին գիտակցել տալու համար պետք է կարդալուց հետո նրա վերաբերյալ հարցեր տալ:

Կապակցված բնագրի ընթերցումը ևս իր առանձնահատկություններն ունի, որովհետև այստեղ տառի, վանկի ու բառի փոխարեն ընկալման միավորներ են դառնում ամբողջական նախադասությունները, որոնց ընկալումն ու միմյանց հետ կապակցումը երեխայի համար լուրջ դժվարություն է ներկայացնում[8]:

[8] Ջ.Գյուլամիրյան, Կարդալու տարրական կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան 1998, էջ 14:

3. Խոսքի ուսուցումը գրաճանաչության շրջանում և դրան ուղղված կրթադաստիարակչական աշխատանքները

Գրաճանաչության դասերին անցկացվող լեզվական աշխատանքները հիմնականում բաժանվում են երկու խմբի՝ խոսքի զարգացման և լեզվական նախագիտելիքների ուսուցման:

Խոսքի զարգացում. Աշակերտների բանավոր խոսքի զարգացումն ամբողջ գրաճանաչության ուսուցման ընթացքում միշտ ուսուցչի ուշադրության կենտրոնում պետք է լինի, որովհետև այն ոչ միայն ուսուցման նպատակն է, այլև միջոց՝ երեխաների մտածողության, աշխարհաճանաչողության ու գիտելիքների պաշարի զարգացման համար:

Բառապաշարը երեխայի խոսքի, մտածողության ու աշխարհաճանաչողության զարգացման հիմքն է. ամեն ինչ մարդ ընկալում է բառերի մեջ կամ բառերի միջոցով, նույնիսկ շրջապատից ստացած անմիջական տպավորությունները, հույզերն ու ապրումները վերջին հաշվով կայունանում ու մտապահվում են բառային հիմքով: Այս առումով բառային աշխատանքը կամ բառապաշարի հարստացումը ոչ միայն խոսքի, այլև ընդհանուր զարգացման համար հսկայական ու անփոխարինելի նշանակություն ունի:

«Այբբենարան»-ի յուրաքանչյուր էջ ուսուցիչը պետք է օգտագործի երեխաների բառապաշարը նոր բառերով հարստացնելու համար, էջերի նկարները, բառաշարքերն ու փոքրիկ բնագրերը նյութ պետք է տան բառային աշխատանքի համար: Նոր կամ անծանոթ բառերի մեծ մասը դասագրքի էջում տրված է լինում երկու անգամ՝ բառաշարքերում կամ նկարներով և կապակցված նյութի մեջ: Առաջին դեպքում ուսուցիչը բացատրում ու պարզաբանում է բառիմաստը, երկրորդ դեպքում՝ ստուգում իմաստի ըմբռնումը, իսկ եթե բառը միայն բառաշարքում է տրված, այն կարելի է շարժական տառերով կազմել ու կարդալ տալ, գործածել բառակապակցությունների ու նախադասությունների մեջ և այլն[9]:

[9] Ա., Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980., էջ 7:

Բառակապակցությունների կազմումը բառերի կապակցման, դրանց միջև իմաստային կապեր հաստատելու, հատկանիշը առարկային վերագրելու ամենապարզ ձևն է: Այն կարևոր ու անփոխարինելի նշանակություն ունի խոսքի գեղեցկացման ու ճոխացման համար, ուստի բառակապակցություններ կազմելու աշխատանքի վրա հատուկ ուշադրություն պետք է դարձնել և դրան որոշակի տեղ տալ լեզվական աշխատանքներում: Երբեմն առարկայի համար պետք է հատկանիշներ գտնել տալ (խնձոր— քաղցր, կարմիր, թթու, կանաչ, դեղին, կարմրաթուշ, հասած, խակ), իսկ մերթ էլ՝ հատկանիշի համար կրող առարկա (կարմիր— դրոշ, մատիտ, վարդ, մեխակ, զգեստ, ծաղիկ, կտոր)[10]:

Նախադասություն կազմելու շուրջ կատարվող աշխատանքը ևս խոսքի զարգացման համար կարևոր նշանակություն ունի: Նախադասությունը իմաստալից խոսքի ամենափոքր միավորն է, որի մեջ բառերը դեմքով, թվով և այլ քերականական հատկանիշներով համաձայնվում են, գործողությամբ կապակցության մեջ մտնում:

Կապակցված խոսքի ստեղծումը խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների բարձրակետն է, որովհետև այդ ուղղությամբ տարվող աշխատանքների վերջնական նպատակը աշակերտների մեջ կապակցված խոսք ստեղծելու կարողության ձևավորումն է:

Խոսք կառուցելու կարողության մշակման տեսակետից օգտակար են դասագրքում եղած թեմատիկ նկարների շուրջ կապակցված պատմությունների ստեղծումը, տեսածի ու լսածի, զգացածի ու խորհածի վերարտադրումը: Այս բոլոր դեպքերում երեխաներն ստիպված են լինում կապակցված ձևով ու որոշակի համակարգով պատմել, խոսք կառուցել: Ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութ աշակերտների կողմից պետք է ամբողջությամբ վերարտադրվի, որպեսզի նրանք սովորեն նյութի հաջորդականությունը պահպանել, հետևել դեպքերի ու դեմքերի տրամաբանական զարգացմանը, կարողանան կապակցված ու ավարտուն խոսք ասել:

---

[10] Ջ.Գյուլամիրյան, Վեց տարեկանների ուսուցման առանձնահատկությունները առաջին դասարանում, Երևան 1986, էջ 21:

Լեզվական, ուղղագրական և կետադրական նախագիտելիքների հաղորդում. Հնչյուններն ու տառերն անցնելուն զուգընթաց աշակերտները գաղափար են ստանում մեծատառի ու փոքրատառի, տպագիր ու ձեռագիր տառերի, մարդկանց անունները մեծատառով գրելու մասին, քանի որ վերլուծության ու կարդալու համար առաջադրվող բառերի մեջ թիվ են կազմում մարդկանց անունները: Որոշակի աշխատանք է տարվում ոչ միայն ձայնավորների ու բաղաձայնների, այլև բաղաձայնների միջև եղած որակական տարբերություններն զգալու ուղղությամբ: Հատուկ աշխատանք է տարվում երկաստիճան ու եռաստիճան բաղաձայնների իմաստ զատիչ արժեքի գիտակցման ուղղությամբ (ուժ-ուշ, մաս-մազ, գիրք-գիրկ, տառ-թառ): Այսպիսի վարժությունները նաև բառապաշարի հարստացման արժեք ունեն, որովհետև յուրաքանչյուր բառ գործածվում է խոսքի մեջ, դառնում երեխաների սեփականությունը:

Գրաճանաչության շրջանում տառերը սովորելուն զուգընթաց երեխաները գաղափար են ստանում նաև մի շարք հնչյունների տառային արտահայտությունների օրինաչափությունների, այսինքն՝ ուղղագրական կանոնների մասին, որոնցից են օ, է, ը հնչյունների, ե, ո, և տառերի ուղղագրությունը, գաղտնավանկի և տողադարձի օրենքները և այլն: Պետք է խուսափել ուղղագրական կանոններն անգիր անել տալուց, ավելի մեծ տեղ պետք է տալ գրավոր վարժություններին՝ գործնական ձևով սովորեցնելով ուղղագրական օրինաչափությունները: Այս ընթացքում երեխաները հետզհետե տարբերակում են ու ճանաչում վերջակետը, ստորակետը, գիծը, ստորակետ-գիծը, միջակետը, կախման կետերը, բազմակետերը, չակերտները, հարցական ու բացականչական նշանները, շեշտն ու բութը:

Լեզվական վարժություններից պետք է տարբերել տրամաբանական վարժությունները, որոնց նպատակը երեխաների վերացական մտածողության զարգացումն ու կատարելագործումն է, որպեսզի այս տարիքից երեխան սովորի գործադրել մտածողության հիմնական ձևերը՝ համեմատությունը, վերլուծությունը և համադրությունը, ընդհանրացումն ու սահմանափակումը: Այս վարժությունները տարվում են երեխաների բառապաշարի սահմաններում՝ դրա ճշտման, համակարգման ու ակտիվացման համար:

Ուսուցումը պետք է նաև դաստիարակող լինի, և այդ կարևոր սկզբունքը հետևողականորեն պետք է պահպանվի ամբողջ գրաճանաչության ընթացքում: «Այբբենարան»-ը շատ մեծ հնարավորություններ է ստեղծում այս առումով. առաջին էջից մինչև վերջինը նյութ է տալիս դաստիարակչական աշխատանքների համար սկսած դասարանական առողջ ու կենսունակ կոլեկտիվի ստեղծումից, մինչև բարոյական, գաղափարական ու գեղագիտական դաստիարակությունը: Այստեղ յուրաքանչյուր նկար, բառակապակցություն, նախադասություն ու փոքրիկ նյութ կարող է այդպիսի աշխատանք տանելու առիթ տալ կամ պայմաններ ստեղծել, եթե ուսուցիչը լավ գիտի իր գործը[11]:

Դաստիարակչական աշխատանքների համար հիմնական թեմաներ կարող են լինել ընտանիքը, մեծերի ու փոքրերի փոխադարձ ջերմ վերաբերմունքը միմյանց նկատմամբ, ընկերությունը, կոլեկտիվիզմը, համերաշխությունը, աշխատանքը որպես երջանկության ու բարիքների աղբյուր, աշխատասիրությունը որպես մարդկային բարձր հատկանիշ, կարգապահությունն ու ազնվությունը և այլն:

Ահա մոտավորապես հարցերի այն շրջանակը, որի շուրջ կարելի է դաստիրակչական աշխատանք տանել գրաճանաչության ուսուցման ընթերցում՝ հետևողականորեն նպաստելով երեխաների բարոյական կերպարի ձևավորումը, նրանց համակողմանի դաստիրակությունը:

[11] Ա.Տեր-Գրիգորյան,Քերականության դասը տարրական դասարաններում, Երևան 1971, էջ 43:

Եզրակացություն

Այսպիսով, գրաճանաչության ուսուցման նախապատրաստական շրջանի հիմնական նպատակը երեխաներին միասնական դասարանական կոլեկտիվի մեջ կազմակերպելը և կարդալ ու գրել սովորելու աշխատանքի համար նրանց տեսականորեն ու գործնականորեն, հոգեբանորեն ու ֆիզիկապես նախապատրաստելն է: Աշակերտների ծանոթացումը դպրոցական կարգուկանոնին, երեխաների խոսքի զարգացումը, տեսողության, լսողության, կինեսթետիկ զգացողության և ուշադրության մշակումը, գրելու համար ձեռքի նախապատրաստումը, կարդալու սկզբնական կարողության ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, աշխարհաճանաչողական տարրական տեղեկությունների հաղորդումը, աշակերտների ուսումնասիրումը, դասարանական միասնական կոլեկտիվի ստեղծումը և այլն:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության ապահովման համար կարևոր նշանակություն ունի դասարանի ճիշտ կոմպլեկտավորումը: Մինչև դպրոցում պարապմունքների սկսվելը առաջին դասարան ընդունվող երեխաների նախնական ուսումնասիրումը ինչպես դասարանը ճիշտ կոմպլեկտավորելու, այնպես էլ երեխաների հետ ծանոթանալու և արդյունավետ աշխատանք կազմակերպելու տեսակետից գործնական արժեք ունի:

Գրաճանաչության ուսուցման համար աշակերտները նաև որոշակի լեզվական ու աշխարհաճանաչողական գիտելիքներ պետք է ունենան, տեսականորեն ու գործնականորեն պետք է նախապատրաստվեն կարդալու և գրելու մտավոր գործողությունների կատարմանը, որոշակի կարողություններ պետք է ձեռք բերեն այդ ուղղությամբ:

Գրելու ուսուցմանը երեխաներին նախապատրաստելը ևս կարևոր նշանակություն ունի գրաճանաչության ուսուցման համար: Գրաճանաչություն ասելով հասկանում ենք ոչ միայն հնչյունների գիտակցումն ու դրանց համապատասխան տառերի ճանաչումը, այլև սովորած տառերը գրելը, այսինքն՝ լսած հնչյունն իր համապատասխան տառով նշանագրելը, տառերը համադրելով բառեր ու նախադասություններ ստանալը:

Գրելու աշխատանքին վարժեցնելու համար ամենից առաջ պետք է զարգացնել աջ ձեռքի դաստակի ու մատների մանր-մկանային համակարգը:

Այբբենական շրջանում երեխան ճանաչում է բոլոր հնչյուններն ու դրանց տառերը, սովորում է դրանք ճիշտ արտաբերել, գրել ու կարդալ կամ՝ հնչյունները վերածել գրերի՝ գրել, գրերը վերածել հնչյունների՝ կարդալ՝ ինչպես առանձին ու անկախ վերցրած, այնպես էլ մյուս հնչյունների ու տառերի հետ ունեցած կապակցության մեջ:

Գրաճանաչության շրջանում երեխաների առջև ծառացած ամենահիմնական խնդիրը բառի հնչյունային վերլուծությունը և յուրաքանչյուր հնչյուն իր համապատասխան տառի հետ կապելն է, աչքի առջև տառեր ունենալով դրանց հնչյունները հիշելն ու արտաբերելը, վանկի ու բառի մեջ դրանք միավորելն ու արտաբերելը՝ որպես արտասանական միաձույլ ամբողջություն: Գրաճանաչության շրջանում տառերը սովորելուն զուգընթաց երեխաները գաղափար են ստանում նաև մի շարք հնչյունների տառային արտահայտությունների օրինաչափությունների, այսինքն՝ ուղղագրական կանոնների մասին, որոնցից են օ, է, ը հնչյունների, ե, ո, և տառերի ուղղագրությունը, գաղտնավանկի և տողադարձի օրենքները և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Բահաթրյան. Մայրենի լեզվի ուսուցումը տարրական դպրոցների մեջ. Երևան, 1987:
2. Ա. Տեր-Գրիգորյան, Աշխատանք այբբենարանով, Երևան, 1979:
3. Ա. Տեր-Գրիգորյան. Հայոց լեզվի մեթոդիկա. Երևան, 1980:
4. Ա.Տեր-Գրիգորյան, Գրականության մեթոդիկա, Երևան, 1968:
5. Ա.Տեր-Գրիգորյան,Ա.Սիմոնյան, Ընթերցանության դասը տարրական դասարաններում, Երևան 1974:
6. Ա.Տեր-Գրիգորյան, Քերականության դասը տարրական դասարաններում, Երևան 1971:
7. Հայ մանկավարժներ. Գիրք Բ. Երևան, 1961:
8. Ջ.Գյուլամիրյան, Կարդալու տարրական կարողությունների և խոսքի զարգացումը տարրական ասարաններում, Երևան 1998:
9. Ջ.Գյուլամիրյան, Վեց տարեկանների ուսուցման առանձնահատկությունները առաջին դասարանում, Երևան 1986: